ՆՈՐ-ԴԱՐ

№ 31 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ երեքշաբթի, 20 Փետրուարի 1901 երեքշաբթի, 20 Փետրուարի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 31

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատավ 5 կ.։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ Даръ“ կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., երկրամների համար կրկնապատիկ։

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1901-ին հրատարակւում է *Թիֆլիսում* նոյն ձիքով և ծրագրով *ամեն օր*, բացի տօներին հետեւող օրերից։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսւանը՝ 6 րուբլի, երեք ամսւանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 5 կ., Թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։

ԱՐՏԱՕԱՀՄԱՆի բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով բառը 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փողոց, տ. № 5

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase), Rédaction du journal „Nor-Dar.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Սպանիան և Աւստրիան։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեղ գրում են.—Բանակցից Մարաղայից։
Նամակ խմբագրութեան։
Թղթակցութիւններ.—Նամակ Փլանսիայից, Պարիզ։ Նամակ Պարսկաստանից, Նոր-Ջուղա։
Քաղաքական.—Հարաւային Աֆրիկա։ Զինաստան։
Հեռագրներ։
Բանաստեղծական.—Հերոսական շրջանի գրական գործիչը
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 19 փետրուարի 1901 թ.

ՕՓԱՆԻԱՆ ԵՒ ԱՒՍՏՐԻԱՆ

Եւրոպայի երկու հին, իրենց անցեալով յայտնի պետութիւնները թուլացել և կազմալուծման վտանգի են ենթարկուած պետական կազմի մէջ յայտնուող ցաւով, որը ներքին ցաւ լինելով քրոնիկական է դարձել։

Սպանիական հասարակական, պետական կեանքը, այլև պետական մեքենան, ենթարկուած է կղերականութեան և ներշնչուած է կղերական ոգով։

Կղերականութիւնից դուրս՝ ոչ պետութիւն, ոչ գիտութիւն, ոչ լուսաւորութիւն և ոչ էլ պետական, հասարակական կազմակերպութիւն, իշխանութիւն և ժողովուրդ ու ժողովրդի շահերը (եթէ այդ ամենը չեն ծառաւում կղերականութեան) չճանաչող կաթոլիկ կղերը տիրապետող տարրն է Սպանիայում։

Այդ կղերի տիրապետութեան է պարտական Սպանիան իր բոլոր պարտութիւնները. Սպանիան մոռացուած է, ասես՝ Եւրոպայի մէջ չլինի գտնւում։

Ազատ ու աւաղջ միտքը մարմնացնում էր Սպանիայում խաւարի, և առանձնապէս կղերի պահպանած ու տարածած խաւարի դէմ, բայց կռիւն անհաւասար լինելով՝ մինչև օրս ոյժը մնացել է կղերականութեան ձեռքը, որ նիւթականապէս էլ հարստանում է, երբ հասարակ, իւր ձեռքերի աշխատանքով ապրող ժողովուրդը հետզհետէ աւելի աղքատանում է։

Սպանիայի բոլոր ընտիր և լուսամիտ հայրենասէրները մարտնչել են կղերականութեան դէմ՝ կամենալով ազատել պետութիւնը և երկիրը կղերի տիրապետութիւնից։

Կղերականութեան տիրապետութեան անկումից յետոյ միայն կարելի է երկիրը կենդանացնել նպատակայարմար կազմակերպութիւններով և վերանորոգութիւններով։

Այժմս կղերականութեան դէմ կռիւն արդէն խիստ ընթացք է ստացել, և յեղափոխական շարժումներ ու փողոցներում ցոյցեր են սկսուել կղերի դէմ, ամբոխն ապստամբական շարժումներ է անում, կարգը պահպանում է զինուորական և ոստիկանական ոյժով։

Տեսնենք, թէ այս անգամ առողջ մտքի կռիւը խաւար կղերականութեան դէմ ինչ հետեւանք կունենայ, բայց այժմէն կարելի է կրկնել յայտնի ճշմարտութիւնը. մինչև որ Սպանիան չազատուի կղերի լուծից, չի վերանորոգուիլ, հետեւաբար և չի ընտանել պետութիւնների շարքում այն տեղը, որին նա արժանի է։

Աւստրիական պետական մեքենան էլ կազում է պետութեան մէջ ապրող զանազան ազգերի միջև ծագած վէճի շրջանում. մի վէճ, որը երեի Աւստրիայի կազմալուծումով միայն պիտի ստանայ իւր վերջնական լուծումը։

Աւստրիան մեծ պետութիւն է, բայց նրա մէջ ապրում են զանազան ազգութիւններ. Հաբսբուրգների հպատակները խօսում են զանազան (իւրաքանչիւրը իւր մայրենի) լեզուով։

Այդ չէ ցաւը, որ իւրաքանչիւր ժողովուրդ իւր լեզուովն է խօսում և իւր լեզուն սիրում է ու պէտք է սիրէ։

Բանն այն է, որ իւրաքանչիւր ազգութիւն Աւստրիայում ուզում է կազմակերպել Աւստրիան իւր հանդուգն, ուզում է՝ որ պետական լեզուն իւր մայրենի լեզուն լինի, գոնէ իւր բնակած երկրում գործածականն իւր մայրենի լեզուն լինի, այն ինչ աւստրիական գերմանացիներն ասում են, որ Աւստրիան իսկապէս գերմանական պետութիւն է, կուլտուրան գերմանական է, մինչև օրս պետական լեզուն եղել է գերմաներէնն և պէտք է մնայ այդ լեզուն իբրև պետական լեզու ու ամեն տեղ տիրապետի։

Իսկ չեխերն այդ բանին հաւանձայն չեն, մինչև անգամ պարլամենտում չեխերէն են ճառում և պահանջում, որ չեխերէնը գերմաներէնին հաւասար դասուի և ընդունուի։

Այդ աստիճան հակառակութեան դէպքում հաշտութիւն չի կարող լինել։

Պարլամենտում կռւում են լեզուի համար. պարլամենտից կրւիւը կանցնի փողոց. դա կարելի բան է։

Ազգայնութեան խնդիրն Աւստրիայում պետական կազմակերպութեան ներքին ցաւն է, որ քրոնիկական է դարձել. այդ ցաւը, ինչպէս տեսնում ենք, դեղով չի բուժուիլ. հարկաւոր է լինելու անդամահատութիւն։ Հարցմունք է, թէ գեղեցիկ և բազդաւոր Աւստրիան կըդիմանայ անդամահատութեան։

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԴՈՒԾԻՉԸ*)

Ծանուած Ուրխ Վեսելովսկու
(Թարգմանուած է առաւելէն ձեռագրից)

Սակայն Վարդան Մամիկոնեանը միայնակ չէր. նա ունէր համախոհակից նիզակակիցներ, որոնց համար նոյնպէս ոչ մի նշանակութիւն չունէին փառքը և երկրային օգուտը, սրանց յափշտակել էր աղնիւ, անաղարտ գրգիռը։ Եղիշէն մի առ մի յիշում է դրանց անունները և փառաբանում դրանց գործերը։ Սրբանց Թուին է պատկանում Ղևոնդը — ե դ դարի հայազգիների աչքի ընկնող համ նամբ անձնաւորութիւններից մէկը։ Նա պատկերանում է մեր առջ իբր մի նրանցից, որ քաջալերում էին ազգը ցերկիը անկեալ թաւալիցիմք, այլ զտեղի առեալ անդրէն ի բարձրութեանն հաստատեսցուք» *)։

Մի փոքր վերև Ղևոնդը՝ համախոհակից հանդիսանալով Վարդանին՝ արտասանում է հետեւեալ աննման խօսքերը, միաժամանակ բնագծելով ընդհանուր օգնորութեան *օրերը.«... եղբարք, մի թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատովք կամակար* **) յարձակեսցուք ի վերայ թշնամեացն՝ որ յարուցեալ գան ի վերայ մեր։ Մեր յոյսն մեզ կրկին երեի. եթէ մեռանիմք՝ կեամք և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան...» ***)։

Եղիշէն՝ քաջաղն Ղևոնդին կից՝ փառաբանում է քրիստոնէութեան քաջաբարոյ զինուոր և պարսից թշնամի Սահակ եպիսկոպոսին ևս։ Լաւ իմանալով, որ իւր օրերը, նոյն իսկ՝ ժամերն արդէն հաշուի են առնուած, տեսնելով իւր առաջ գաժան սեռը, գործող առեղծութիւնը՝ Սահակը, նոյն իսկ այդ պարագաներում, համարձակօրէն պատասխանում է Ցաղկերտի համախոհակից՝ տզօր Դենշապուհին, որը պահանջում էր Սահակից բացատրել իւր բոլոր գործերը, այն է՝ ճիշտ է արդեօք, թէ Սահակը դիմադրել է կրակապաշտութեան տարածուելուն Հայաստանում, պաշտպան է եղել իւր կրօնի, աշխատել է մոգերին քրիստոնէութիւն քարոզել և ապացուցել նրանց կրօնի և դաւանանքի սխալականութիւնը։ Եղիշէն արձանագրում է Դենշապուհի և Սահակի միջև տեղի ունեցած խօսակցութիւնը տարց ու պատասխանի ձեով, որով աներկիւղ ծերունին խոստովանում է իւր բոլոր գործերը և մի անգամ ևս իւր թշնամիների երեսով տալիս նրանց տգիտութիւնը, ենթամտութիւնը և անհամբերատարութիւնը։ Զայրացած Դենշապուհն յարձակւում է քաջի, անխնայ համոզմանց տէր Սահակի վրայ և սրի մի հարուածով կարում է նրա աջ ուսը, մէջքի մի մասը և ձեռքը։ Սահակը, մինչև իւր վերջին շունչը, արիւնաքամ լինելով և բոպէ բոպէի վրայ թուլանալով իսկ՝ չարունակում է քաջալերել և ոգևորուել իւրայիններին, բացարձակ դառնում է իւր կրօնը և բարձր ձայնով արտասանում է սաղմոսների կտորներ...

Սահակի հետ միաժամանակ մեռնում են ե-րդ դարի հայազգիների մի շարք անուանի ներկայացուցիչներ. դրանք առաջնորդ և ուղեկից ունէին՝ զարմանք և պատկառանք պատճառող հզօր և քաջարի կամք և հայրենասիրութիւն։ Մեռնում է ծովսէփ պատրիարքը, որ քանիցս քաջալերել և ոգևորել էր գործելու հայ անուանի իշխաններին, գօրքը և հասարակ ժողովուրդը, և, վերջապէս, բաւականին զարկ էր տուել իւր օրով երեան եկած ազգային չարժմանը։ Նրա քաջարիութիւնը, նրա հոգւոյ հանգստութիւնը՝ երբ կեանքի միայն վերջին նշոյլներն էին զգացւում նրա մէջ, խրատէս ազդեց նոյն իսկ Դենշապուհի վրայ, որն ակամայ բացականչեց. «Արդ

*) Տես «Նոր-Դար» № 27.

*) Տես նոյնը, էջ 101։

**) «Կամակարութեամբ». Վեն. հր.։ Տես նոյնը, էջ 100։

***) Տես նոյնը, էջ 100—101։

ՔՐՈՆԻԿՈՆ

Այրի տիկին Նադիրեան ցանկութիւն է յայտնել Ներսիսեան դպրոցին նուիրելու իւր մի սեպհական գետինն այն պայմանով, որ այդտեղ կառուցուի դպրոցի նոր շէնքը։ Այդ գետինը գտնւում է արսենալի մօտ, Շուղուրէթի գլխին և բռնում է մօտ 3 դեսեատին տարածութիւն, ուր կարելի է դպրոցի շէնքին կից նաև պարտէզ ձգել։ Բացի դրանից, նոյն տիկինը խոստացել է նուիրել իւր մի ուրիշ գետինը Դիգուրէում, հայոց եկեղեցի կառուցանելու համար, ի նկատի ունենալով որ քաղաքի այդ հեռաւոր մասում հայոց եկեղեցու կարիքը վաղուց է զգացւում։

Վեհափառ Հայրապետը կիրակի, փետրուարի 18-ին, կառքով դիտելու գնաց յիշեալ երկու տեղերը։ Նորին Վեհափառութեան հետ էին, ի միջի այլոց, Թեմիս սրբազան առաջնորդը, ինժեներ պ. Ն. Գրիգորեան և նուիրատու տիկին Նադիրեանի կողմից իբրև ներկայացուցիչ գրավաճառ պ. Զաքարիա Գրիգորեան։ Նորին Օծութիւնը, գպրոցին նուիրուող գետինը դիտելուց յետոյ, ինժեներ պ. Գրիգորեանին յանձնարարեց մանրամասն զեկուցում ներկայացնել այդ գետնի մասին, իսկ Դիգուրէի եկեղեցուն նուիրուող տեղին միանգամայն հատնութիւն տուեց։

— Լսում ենք, որ Աթալեխայի յօրդ Կիւրեղ վ. Կիւրեղեան Թիֆլիս է եկել Նորին Վեհափառութիւնից խնդրելու համար, որ նոյն պաշտօնով մի ուրիշ տեղ նշանակի իրեն։

— Թիֆլիսում գոյութիւն ունեցող «կանանց նաթային ընկերութիւնը» մտադիր է մի յատուկ ֆոնդ կազմել նպաստելու համար այն կանանց, որոնք կրցանկանան տեխնիքական կրթութիւն ստանալ և ինժեներների ու տեխնոլոգների կոչում ձեռք բերել։ Այդ ֆոնդը կազմելու համար ընկերութիւնը յատկացնելու է որոշ տոկոս իւր զուտ եկամուտներից։

— Կիրակի, փետրուարի 18-ին, Թիֆլիսի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում կայացած ծխական ընդհանուր ժողովում ձայների բացարձակ մեծամասնութեամբ երէցփոխ ընտրուեց *Յովհաննէս Տէր-Մարգարեան*։

*) Տե՛ս նույնը, էջ 152—153։

— Մեծ հետաքրքրություն, ցնծություն և ոգևորություն է տիրում Ղարաքիլիսայում, որ ամեն կողմից ուխտավորներ են գալիս Սուրբ Նշանի տոնին։ Ուխտավորների թիվը հասնում է 10,000-ի։ Ուխտավորների մեջ կան նաև Ղարաքիլիսայի հայ ազգաբնակչության ներկայացուցիչներ։ Ուրախ է տեսնել, որ ուխտավորների մեջ կան նաև մահմեդականներ։ Ուխտավորների համար ամեն կերակուր էժան է։ Ոչխարի միսը 3 կոպեկ ֆունտը, հավը 10 կոպեկ, հացը 1 կոպեկ

Ես ամուսնացած եմ եղել 18 տարի, ունեցել եմ 5 զավակ, որոնցից 4-ը մահացել են մանկական հիվանդություններից։ Ամուսինս մահացել է 1899 թ. հունվարի 19-ին, ապրելով ընդամենը 32 տարի։ Ես ամուսնացել եմ 14 տարեկան հասակում։ Ամուսինս մահացել է ուղեղի բորբոքումից։ Նա հիվանդացել էր 3 շաբաթ առաջ։ Ես ամուսնացել եմ նրա հետ սիրով։ Ամուսինս ինձ հետ ապրել է լավ։ Ես ոչ մի անգամ չեմ նկատել, որ նա ինձ դավաճանած լիներ։ Ես ամուսնուս հետ ապրել եմ Ռոստովում, Նախիջևանում և Ղրիմում

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՍՈՖԻԱ, 16 փետրուարի.—Գաւառական չատ քաղաքներում ժողովները կայացան ցոյցեր անելու համար դեռ ևս զոյութիւն ունեցող հրացանաձգների ընկերութիւնները լուծելու դէմ։—Գահաժառանգ իշխանազուն Բորիսի հիւանդութիւնը նորից երկիւղ է պատճառում։

ՉԱՆԿՀՈՒԱՅ.—Չինական աղբիւրից հաղորդում են, որ Թունֆուսեանի և Թուանի կողմնակից Լիխէյլուն, 5,000 հոգու գլուխ անցած, ապստամբութիւն է յարուցել Լաօյօսյում։

ՊԵԿԻՆ.—Անգլիական զօրքերը հրաման ստացան պատրաստ լինելու ի դէպս, եթէ չինացիները յապաղեն պատուհասների պահանջները կատարել։

Կ. ՊՈԼԻՍ.—Նկղզի Քէօշկում տեղի ունեցած վերջին խորհրդի մէջ մինիստրներն զբաղուեցին Մակեդոնիայի վիճակով և զինուորական այն միջոցներով, որոնք պիտի ձեռք առնուեն երկիրը խաղաղեցնելու նպատակով։ Զինուորական մինիստրութեան մէջ, ինչպէս երևում է քաղաքում չջլող երկիւղալի լուրերից, քննութեան առարկայ են եղել Ուսքիւբ-Կիւստենդիլի գծի վրայ թրքական զօրքեր կեդրոնացնելու վերաբերեալ խնդիրներ։ Այդ լուրերն, անշուշտ, անհիմն են. գործը, հաւանաբար, վերաբերում է թուրք-բուլղարական սահմանի վրայ աւելի խիստ զինուորական հսկողութիւն հաստատելուն և վերջերս Կ. Պոլսի ու Սոֆիայի մէջ փոխանակուած այն յայտագրերին, որոնք վերաբերում են զինեալ խմբերի Բուլղարիայից Թուրքիա անցնելն արգելելու միջոցներին։ Մի ևս կողմից պնդում են, որ կառավարութիւնը մտադիր է Սալոնիկի 3-րդ զօրաբանակին հրաման տալ հաւաքել ռեդիֆների գումարտակները զանազան տեղերում։ Մոնաստիրից հաղորդում են, որ բուլղարական մեծ թուով ուսուցիչներ ու քահանաներ են ձերբակալուած հաւնան աւաններում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ.—Լուսաւորութեան մինիստրի վրայ փետրուարի 14-ին կատարուած սպանութեան փորձի վերաբերմամբ նախնական քննութիւնը կատարում է ամենակարևոր գործերի դատական քննիչ Կուզմին Պետերբուրգի դատական պալատի պրոկուրորի վերահսկողութեամբ։ Այս սպանութեան փորձի համար մադագուղ Գոմելի մեչչանին Պեօտը Վլադիմիրով Կարպովիչի մասին եղած տեղեկութիւններից երևում է, որ նա Մոսկուայի համալսարանի բնագիտական ֆակուլտետի նախկին ուսանող է, այնտեղից նա 1896 թուին արձակուած է ուսանողական անկարգութիւններին մասնակցելուն համար։ 1898 թուին Կարպովիչին թոյլ էր տրուած մտնելու Իւրևի համալսարանի բժշկական մասնաճիւղը. այնտեղ նմանապէս 1899 թ. արձակուած է ուսանողական անկարգութիւններին մասնակցելուն համար։ Անցած տարի Կարպովիչը դասախօսութիւններ էր լսում Բերլինի համալսարանում։ Մեղադրեալ Կարպովիչը քանտարկուած է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 17 փետրուարի.—Պրոֆեսոր Բերգմանի ներկայութեամբ առաւօտեան բժիշկների ունեցած խորհրդակցութեան ժամանակ լուսաւորութեան մինիստր Բագալեպովի դրութիւնը գոհացուցիչ է ճանաչուած։ Ինչերը նա աւելի լաւ անցկացրեց. տաքութեան աստիճանը 37,3, զարկերակը 76, շնչառութիւնը 16. խուխի մէջ արիւն քիչ է, կուլ տալը դեռ ևս ցաւ է պատճառում. արտաքին վէրքը լաւանալու վրայ է։ Գնդակի տեղը ճշտիւ որոշելու համար այսօր հետազօտութիւն կրկատարուի Ռէօնտգենի ճառագայթներով։

ՄԵԼՔՈՒՐՆ.—Մեծ գոհունակութիւն է յարուցանում այն բանը, որ Ռուսիան համաձայնել է մի յածանաւ ուղարկել Աւստրալիայի առաջին պաբլամենտի բացմանը։

ՊԵԿԻՆ.—Դեսպանների և չինական լիազօրների այսօրուայ նիստում գերմանական դեսպանն առաջարկեց մի շարք որոշումներ, որոնցով պիտի փոխարինուեն բանակցութիւնները հետևեալ կէտերի իրագործման համար. 5-րդ կէտի—զէնքերի ներմուծման և ռազմական նրբանցքներ պատրաստելու մասին, 7-րդ կէտի—դեսպանատների պահպանության մասին, 8-րդ կէտի—Թաքուի և Պեկինի միջև գտնուած բերդերը քանդելու մասին, 9-րդ կէտի—Պեկինի և ծովի մէջ գտնուած ռազմական կարեւոր կէտերը զբաւելու մասին և 12-րդ կէտի—ձունդ-լի եամենի վերակազմութեան ժամանակ կատարուող չինական ձեռակերպութիւնները վերացնելու մասին։

ՈՒՏՐԵԽՏ. — Նախագահ Կրիւգերին չջլապատողները չեն հաւատում Բոթայի անձնատուր լինելու լուրին։ Սակայն, ասում են նրանք, որ Բոթայի անձնատուր լինելը դեռ ևս չէր վերջացնիլ պատերազմը, որովհետև Բոթան լիազօրութիւն չունի բանակցելու ընդհանուր պատերազմական գործողութիւնները դադարեցնելու մասին. այդպիսի բանակցութիւններ կարող է անել միմիայն Տրանսվաալի կառավարութիւնը, որին ժամանակաւորապէս գլուխ է անցած Շալկ-Բուրգերը։

ԼԻՍՍԱԲՈՆ.—Պէրների ժողովը միաձայն որոշեց առաջց Գայսրին երախտագիտութիւն յայտնել Հագում միջազգային միջնորդ դատարան հիմնելու գործում ունեցած ձեռներէցութեան համար։ Այս որոշումը հաղորդուած է այստեղի ռուսաց դեսպանին։

ԼՈՆԴՈՆ. — Կիտչենները հեռագրում է Պրետորիայից, որ Դևետն ստիպուած է նորից գնալ դէպի Օրանժ գետի հիւսիսային ափը, Կապի գաղութից արտաքսուած են բոէրները։ 200 բոէր գերի են բռնուած, մնացածները ցրուած են։ Կիտչենների 80 հրացանաձիգներ յարձակուան են թարկուեցին իրենցից գերազանց թուով բոէրների կողմից և երկարատև կռուից յետոյ ստիպուած էին անձնատուր լինել, որի միջոցին քսան հոգի սպանուեցին և վիրաւորուեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ.—Երեկոյեան ժամը 9-ին լուսաւորութեան մինիստրի հիւանդութեան մասին բիւլլետեն դուրս չեկաւ։ Այսօր պրոֆեսոր Բերգմանը հետազոտութիւն կատարեց Ռեօնտգենի ճառագայթներով և տեսաւ, որ գնդակը նստած է վզի ողնաշարի ձախ կողմը։ Ընդհանուր դրութիւնը միանման է։

ԼՈՆԴՈՆ. —«Daily Chronicle»-ը հաւատացնում է, որ թէև Բոթայի անձնատուր լինելը պաշտօնապէս չի հաստատուում, սակայն հիմք կայ կարծելու, որ այդ բանը յետաձգուած է միայն, որովհետև դեռ ևս չեն վերջացած բանակցութիւնները մի քանի երկրորդական ծրագրների մասին։ Այս հանգամանքը հաստատում է նրանով, որ զինուորական իշխանութիւնը փոխել է ռազմամթերքի մատակարարման վերաբերեալ մի քանի պայմանագրեր, որոնք կնքուած էին պատերազմը չարունակելու համար։

Հրատարակուած է զինուորական բիւջէն 1901 թ.ի համար. բոլոր ծախքերը հաշուած են 87 915,000 ֆունտ ստերլինգ, դրա թուում 58.230,000 ֆ. պատերազմի համար։ Զօրքի կազմութեան մէջ մտնում են 450,000 հոգի, ընդ սմին մշտական կազմը լինելու է 220,000 հոգի, մնացածները հարկաւոր են միայն Հարաւային Աֆրիկայի և Հինդոստանի համար։ Խոստացուած է, որ Աֆրիկայի հարաւում գտնուած ներկայ ոյժերը չորս ամսից յետոյ կըսկսեն հետզհետէ կրճատուել։

ՊԵԿԻՆ.—Դեսպանների ժողովում դեռ ևս չի վերջացած պատժի ենթակայ գաւառական մանդարինների անուանացուցակը։ Քննւում էր նմանապէս դեսպանական թաղ հիմնելու խնդիրը. Խաղլիայի օգտին եղած որոշումը Եւրոպական մաքսային պաշտօնեաներին կըհաւատարմացնի ապրել ամրացած թաղից դուրս. դեսպաններն անշուշտ գտնում են, որ մաքսային վարչութիւնը զուտ չինական հաստատութիւն է, ուստի և իրաւունք չունի սեպհականատէր լինելու։ դեսպանական թաղում, թէև նրա ձեռքին են գտնւում օտարերկրեայ պարտատէրերի շահերը։ Ֆրանսիական, գերմանական և աւստրիական դեսպանները գտնում են, որ մինչև անդամ եւրոպացի մասնաւոր անձեր իրաւունք չունին այնտեղ սեպհականատէր լինելու։ Եթէ այս կարծիքն ընդունուի, բոլոր ոչ դիւանագէտները պիտի ապրեն թշնամի բնակչութեան մէջ, որը գրգռուած պիտի լինի այն բանից, որ գետին է խլուած դեսպանական թաղի համար։

ԼՈՆԴՈՆ.—«Morning Post»-ը հաղորդում է, որ գերմանական, ֆրանսիական և անգլիական հրամանատարները հրաման են տուել չարունակել պատրաստութիւնները չուատփոյթ արշաւանքի ուղարկելու, եթէ արքունիքը նորից դիմադրէ պահանջներին։

ՍՈՖԻԱ.—Լուր են հաղորդում, որ բուլղարական սահմանի վրայ կեդրոնացուելու է յիսուն հազար թուրք զօրք։

ԴՐՈՆԹԻԵՐԴ.—Անգլիական թագաւորը մեկնեց Լոնդոն։

ԲԵԼԳՐԱԴ.—Իր հաւատարմութիւնը յանձնելիս առաջ դեսպանն ասաց, որ ռուսաց կառավարութիւնն անկեղծօրէն խաղաղ բարգաւաճումն ու բարօրութիւն է ցանկանում Սերբիային։ Թագաւորն իւր կողմից արտայայտեց իւր զգացմունքները դէպի Օգոստափառ Կնքահայրը և վստահացրեց, որ իւր ձգտումն է՝ բարեկամական սրտակից յարաբերութիւններ հաստատել երկու երկրների միջև, ասելով թէ կարելի է վստահել իւր և իւր կառավարութեան ամենամեծ պատրաստակամութեան վրայ։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.—Միացեալ Նահանգները մտադիր են աւելի ևս քչացնել իրենց զօրքերը Պեկինում և հարկաւորը հրամանն ուղարկեցին Չաֆֆիին։

ԹԵՆՇԻՆ, 18 փետրուարի.—Տաւար գնելու համար երկրի խորքը գնացած երկու մագործների՝ Կլուգէի և Բերգների սպանութեան լուրերն առիթ տուին որոնելու նրանց։ Որոնումները ցարդ անհետանք են մնացած, բայց շարունակում են։

ՊՈՐԻԶ.—Լաբէն հանդիսաւոր ընդունելութիւն տուից կրօնական դեսպան իշխան Ռոդոլինին։

ՊՈՐԻԶ.—Ամենահաւատի աղբիւրներից վկայում են, որ Մանջուրիայի վերաբերմամբ օտարերկրեայ մամուլի հաղորդած ռուս-չինական համաձայնութեան բնագիրը դիտմամբ խեղաթիւրուում է դէպի Ռուսիան անվստահութիւն ներշնչելու համար իբրև պարզապէս անհեթեթ բան. առանձնապէս աչքի է ընկնում հեռագրների մէջ յիշուած այն յօդուածը, որը վերաբերում է Նիւչուանի նաւահանգստին։ Եթէ Ռուսիան կամենար առանձին համաձայնութիւն կընքել Չինաստանի հետ, այդ բանը կանէր միմիայն այն նպատակով, որ իրագործէր Մանջուրիան Չինաստանին վերադարձնելու մասին ունեցած իր մտադրութիւնը, որոշելով այն պայմանները, որոնցով հնարաւոր լինէր այդ երկրից ռուսաց զօրքերի հեռացումը։

ԿՈՊԳՏԱԴ. Ցարդ այստեղ ժանտախտից հիւանդացել է 50 հոգի, որոնցից 12-ը մեռել են. Գալչատադից դուրս երկու տեղում հիւանդանալու մի քանի դէպքեր են եղել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ.—Մինիստր Բագալեպովի հիւանդութեան բիւլլետենը. «Ինչերն անցկացրեց գրեթէ անքուն, շնչառութիւնն երբեմն ոչ կատարեալպէս ազատ լինելու պատճառով. նկատում է փորը ինչ թուլութիւն։ Տաքութեան աստիճանը 37,6, զարկերակը 78, շնչառութիւնը 16. խուխի մէջ արեան խառնուրդ չկայ. կուլ տալը դեռ ևս ցաւ է պատճառում։ Բժիշկների կարծիքով, գնդակն անյապաղ հանելու կարիք չի տեսնուում»։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ համար հարկաւոր է մի ՄԱՐԿԱԴԱՐԱՆ։ Էջմիածնայ ճեմարանից կամ Ներսիսեան գպրանոցից աւարտած, հմուտ եկեղեցական արարողութեանց և երգեցողութեան։ Դիմելու է մանրամասն տեղեկութիւններով Совѣтъ Московскихъ Армянскихъ церквей, Армянскій пер. домъ Армянской церкви, Москвѣ.
(550) 3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՀԱՄՄԱՆՈՑ ՁԵՌՆԱՐԿ
ԹՂԿԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԹՂԿԻ ՊԱՏԻՒԱՍՏՄԱՆ
Աշխատասիրեց
Ա. ՍԱՐԿ. ԱԼԻԱԶԵԱՆՑ
ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.
Վաճառում է Թիֆլիսի Կովկասեան և Կեդրոնական գրավաճառանոցներում։
547) 4—3

(М.) № 202933 12—3

ԹԻՓԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ծանուցանում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ ներկայ տարուայ փետրուարի 20-ին, օրուայ ժամը 1-ին, վարչութեան մէջ, տեղի կունենայ աճուրդ քաղաքին պատկանեալ գետինը կապալով տալու փայտի պահեստի համար, որ գտնւում է 10-րդ քաղաքամասում, երկաթուղու մօտ, 263 քառակուսի սաժէն տարածութեամբ և կապալով Նիկողայոս Յովհաննիսեանի ձեռքումն է։
(549) 3—2

Ա. ՓՐԻՊՈՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Ներքին փոխառութեան վիճակախաղի տոմսերն ապահովացնելու համար վերցնում է ցնոր տնօրինութիւն՝
1ր.75կ. ամեն մէկ տոմսը II կարգի 1901 թ. մարտի մէկի տիրաժից
1ր.10կ. » » » III » 1901 թ. մայիսի մէկի տիրաժից
Բացի 15 կոպ.մարկան ամեն մէկ անդորրագրից։
Գրասենեակը հեռագրով և վերադիր վճարով ապահովացումն չի ընդունում։
(548) 3 3

ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ
ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
ԹՌՉԱԼ Է ՏՐՈՒՇԱ ՌՈՒՄԱՏԻԶՄԻՑ
Այս կապսիւլների մէջ պարունակուած կաւա սանտալի էսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել հանարէի գազատի հիւանդութիւնների դէմ, կապայ-բալզամի և կուբերայի դէմ։ Սա ներգործում է աւելի արագ, չի յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չի պատճառում և աչքի ցաւացնում է փոխում ու կլտիկը։
Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրայ լինի սեւ տառերով դրոշմած կնիքը MIDY
Պահեստը Ռուսիայի կլխաւոր դեղատներում։
(М.) № 200369 60—7



Дозв. цензурою Тифлисъ, Февраля 19-го дня 1901 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ 387